



ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ 2019-2020
ՈՒԱՍՏԱՐՎԱ ԱՎԱՐՏԱԿԱՆ-ՓՈԽԱԴՐԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՆՈՆՆԵՐ**

Հաստատվել է

ԵՊԲՀ Գիտական խորհրդի 23.05.2020
թվականի թիվ 20-05-07 -03 որոշմամբ
Ռեկտոր Ա.Ա.Մուրադյան

Համաճարակային արտակարգ իրավիճակով պայմանավորված՝ օտարերկրացիների նախապատրաստական ուսուցման ավարտական-փոխադրական ատեստավորումն անցկացնել հետևյալ ընթացակարգով.

1. Բոլոր խմբերում առցանց դասերն ավարտել 27.05.2020թ.:
2. Ավարտական ատեստավորման համար մասնագիտական («կենսաբանություն», «քիմիա», «ֆիզիկա») 2 առարկաների ընտրությունը կազմակերպել առցանց՝ ուսանողի կողմից ընտրված առարկաների վերաբերյալ 11.05.2020թ.-15.05.2020թ. ժամանակահատվածում ներկայացված դիմումի հիման վրա:
3. Առցանց ստուգարքները կազմակերպել հետևյալ կերպ.
 - Միայն ստուգարքային հանդիսացող «հայոց լեզու» և «անգլերեն լեզու» (բարձր մակարդակի խմբերում) առարկաների առցանց դասերին 70%-ից ավելի մասնակցության և ընթացիկ առնվազն 1 դրական պատասխանի դեպքում՝ ստուգարքը նշանակել մեխանիկորեն:
 - Ստուգարքային հանդիսացող (ատեստավորման համար չընտրված) մասնագիտական առարկայի առցանց դասերին 70%-ից ավելի մասնակցության դեպքում՝ ստուգված համարել վերջին դասի ընթացքում առցանց ուսուցման ժամանակահատվածի թեմաներից 2 բանավոր հարցերին կամ 5 թեստային առաջադրանքներին (կախված առարկայի առանձնահատկություններից) տրված առնվազն 50% դրական պատասխանների դեպքում:
 - Ստուգարքը մեխանիկորեն չստանալու, ձախողելու, ինչպես նաև առցանց դասերին 70%-ից պակաս մասնակցության դեպքում՝ ստուգարքը չի նշանակվում և տեղափոխվում է մարման շրջան՝ 1.06.2020-5.06.2020թ. ժամանակահատվածում, որը ձախողելու, կամ դրան չներկայանալու

պարագայում՝ ուսանողը չի թույլատրվում հիմնական առարկաների ատեստավորման և հեռացվում է Համալսարանից:

- Ստուգարքային տեղեկագրերը ներկայացնել ամբիոնի վարիչի և յուրաքանչյուր խմբի դասախոսի ստորագրությամբ:

4. «Կենսաբանություն», «Քիմիա», «Ֆիզիկա» առարկաներից՝ 2-ի (ըստ ուսանողի ընտրության) և «անգլերեն լեզու» (ցածր մակարդակի խմբերում) առարկայից ուսանողների ավարտական-փոխադրական ատեստավորումը կատարել առցանց եղանակով հետևյալ կերպ.

- Կազմել ավարտական-փոխադրական ատեստավորման հանձնաժողով (ռեկտորատի որոշմամբ), որի մեջ ընդգրկել հանձնաժողովի նախագահին, օտարերկրացիների նախապատրաստական ուսուցման բաժնի պետին՝ որպես հանձնաժողովի նախագահի տեղակալ, տվյալ առարկաների ամբիոնների վարիչներին և մեկական դասախոս յուրաքանչյուր ամբիոնից:
- Ավարտական-փոխադրական ատեստավորումը կազմակերպել 8.06.2020թ.- 19.06.2020թ. ժամանակահատվածում՝ ըստ սահմանված ժամանակացույցի:
- Տվյալ առարկայի առցանց դասերից 70%-ից ավելի մասնակցություն ցուցաբերած ուսանողների ավարտական-փոխադրական ատեստավորումն անցկացնել տվյալ խմբի դասախոսի կողմից՝ ատեստավորման հանձնաժողովի անդամների մասնակցությամբ և պարտադիր տեսաձայնագրությամբ:
- Ատեստավորման ընթացքում ուսանողը պետք է պատասխանի ամբիոնի կողմից առարկայի ծրագրին համապատասխանորեն կազմված հարցաշարի շրջանակներում բանավոր 3 հարցի կամ 10 թեստային առաջադրանքի (կախված առարկայի առանձնահատկություններից):
- Յուրաքանչյուր ուսանողին տրվում է առավելագույնը 10 րոպե՝ բանավոր պատասխանի կամ թեստային առաջադրանք կատարելու համար:
- Ուսանողն ատեստավորվում է բանավոր հարցերին կամ թեստային առաջադրանքներին նրա կողմից տրված առնվազն 50% դրական պատասխանների դեպքում:
- Տվյալ առարկայի առցանց դասերից 70%-ից պակաս մասնակցություն ցուցաբերած ուսանողը չի թույլատրվում ավարտական-փոխադրական ատեստավորման և հեռացվում է Համալսարանից:
- Ավարտական-փոխադրական ատեստավորումը ձախողած կամ չներկայացած ուսանողը հեռացվում է Համալսարանից:
- Ավարտական-փոխադրական ատեստավորման տեղեկագրերը ներկայացվում են հանձնաժողովի անդամների և յուրաքանչյուր խմբի դասախոսի ստորագրությամբ:

5. Նախապատրաստական ուսուցման ավարտական-փոխադրական ատեստավորումը հաջողությամբ հանձնած ուսանողի ավարտական փաստաթղթում դրվում է մինչև 2020թ. մարտի 14-ի դրությամբ ընթացիկ հարցումներից ստացած միջին գնահատականները: